«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ

2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՄԱՅՐԵՆԻ

Արքայական խոսքը մեր կմնա հավետ…

Վահան Տերյան

1. Ո՞ր բառերը ձայնավոր հնչյունով չեն սկսվում, ընդգծի՛ր դրանք (2 միավոր)։

Էակ, երկար, ոտք, արի, օրինակ, որոշել, առարկա, իրիկուն, եղանակ։

2. Ուշադի՛ր կարդա, ընդգծի՛ր յա երկհնչյուն ունեցող բառերը։

Հուշում։ Դրանք թաքնված են (2 միավոր)

Գայլենի, վագրենի, վայրկենաչափ, ժամանակաչափ, մատենադարան, գրադարան, պատենավոր, օրեցօր, առօրեական։

3. Այս հատուկ անուններում առկա են նույն բառի հոմանիշները, գտի՛ր, ընդգծի՛ր դրանք (2 միավոր)։

Վարդգես, Վարդուհի, Գիսակ, Միսակ, Վարսենիկ, Հերիքնազ, Ոսկեծամիկ…

4. Ի՞նչ ավելացնենք, որ դառնան (2 միավոր)՝

Երամ + …..ակ………. ձիերի խումբ –երամակ

Խոյ + ,,,,,,,,,,ակ,,,,,,,,,,,,,այունագլխի քար –խոյակ

Սույզ +………ակ…………ջրի մեջ սուզվող մարդ – սուզակ

Բույժ+……….ակ…………բժշկի օգնական – բուժակ

5. Ավելորդին շարքից դո՛ւրս հրավիրիր, վրան հանման (–) նշա՛ն դիր (2 միավոր)։

Ուրախ, զվարթ, անզարդ, խնդուն

Գեղեցիկ, սիրուն, գեղանի, կիրթ

Դալուկ, գունատ, գունեղ, դժգույն

Հարուստ, մեծատուն, հյուրատուն, ունևոր

6. Գուշակի՛ր բառը (2 միավոր)։

Տարի բառի հոմանիշը + ա հոդակապ+ հին բառի հականիշը =ամանոր

Հոտ բառի հոմանիշը + այրել բառի հոմանիշի արմատը= բուրվառ

Արեգակ բառի հոմանիշը + ելք բառի հականիշը = արևմուտք

Ապրելու տեղ, կացարան նշանակող բառը + ապօրինի բառի արմատը=տնօրեն

7. Հորինի՛ր հեքիաթ, որի հերոսներն են վարդի թուփը և անտուն շունը, վերնագիրն ինքդ ընտրի՛ր (8 միավոր)։

| Միավոր | Նկարագրություն |
|---|---|
| 7-8 | 1. Ընտրել է գերազանց վերնագիր՝ պայմանավորված հեքիաթի բովանդակությամբ<br>2. Կիրառել է հարուստ բառապաշար։<br>3. Պահպանել է հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ։<br>4. Հանդես է բերել ստեղծագործական մոտեցում. հորինել է ինքնօրինակ հեքիաթ։<br>5. Ապահովված է հեքիաթի բարոյախրատական ենթիմաստը։<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ, վրիպակներ հիմնականում չկան։ |
| 5-6 | 1. Բավական լավ վերնագիր է ընտրել։<br>2. Կիրառել է բավական հարուստ բառապաշար։<br>3. Պահպանել է հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ։<br>4. Դրսևորել է ստեղծարար մոտեցում. հորինել է հեքիաթ։<br>5. Ապահովված է հեքիաթի բարոյախրատական ենթիմաստը։<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական 2-3 սխալներ և վրիպակներ կան։ |
| 3-4 | 1. Հեքիաթը չի վերնագրել։<br>2. Բառապաշարն աղքատիկ է։<br>3. Պահպանել է հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ։<br>4. Ստեղծարարություն չի դրսևորել. հեքիաթը ինքնօրինակ չէ։<br>5. Մասամբ ապահովված է հեքիաթի բարոյախրատական ենթիմաստը։<br>6. Ուղղագրական, կետադրական, քերականական 5-6 սխալներ և վրիպակներ կան։ |
| 1-2 | 1. Հեքիաթը չի վերնագրել։<br>2. Բառապաշարն աղքատիկ է։<br>3. Չի պահպանել հեքիաթի ժանրին բնորոշ ձևը և ընթացքը՝ սկիզբ, ընթացք, ավարտ։<br>4. Ստեղծարարությունը և երևակայությունը բացակայում են։<br>5. Ուղղագրական, կետադրական, քերականական 7-8 սխալներ և վրիպակներ կան։ |
| 0 | Հեքիաթը չի գրել։ |